Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Թեմա՝ Թիմային աշխատանքը, համատեղ դասավանդում՝ առավելություններ և բացթողումներ

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

ՈՒսուցչի օգնական՝ Սվետլանա Հովսեփյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….3

Գլուխ 1

Թիմային աշխատանքի առանձնահատկությունները……4

Համատեղ Դասավանդման առանձնահատկությունները…….5

Համատեղ դասավանդման վեց մոտեցում……7

Գլուխ 2

Փորձարարական աշխատանք……..10

Եզրակացություններ……..15

Օգտագործված գրականության ցանկ…….16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այսօր բոլոր երեխաները չեն կարող սովորել նույն ձևով ու կրթական նույն մեթոդներով: Ուսուցչի կարևորագույն դերը աշակերտների համար այնպիսի բարենպաստ պայմաններով միջավայրի ստեղծումն է, ուր նրանք կկարողանան արտահայտել իրենց ուժեղ կողմերը,ինչպես նաև սովորել ընկերներից և, իհարկե, դառնալ գիտելիքի ակտիվ մշակողը:Գտնվելով ներառական կրթության իրականացման այս փուլում՝ պետք է փաստենք, որ դասարաններում հաճախ դժվար է կազմակերպել այնպիսի կրթական միջավայր, որտեղ բոլոր երեխաները կկարողանան հավասար ներգրավվել դասին:Մեր հետազոտական աշխատանքի շրջանակներում փորձել ենք ներկայացնել դասի համատեղ կազմակերպման և թիմային աշխատանքի ձևերը, որոնք հնարավորություն են տալիս դասին ներգրավվելու բոլոր աշակերտներին:

Այստեղ ստեղծվում են աջակցող հարաբերություններ,բանիմացություն, միասին աշխատելու նրբություն:

Հետազոտության **նպատակն է** ներկայացնել համատեղ դավանդման և թիմային աշխատանքի առանձնահատկությունները, դրանց առավելությունները և թերությունները:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

- Ուսումնասիրել և ներկայացնել թիմային աշխատանքի առանձնահատկությունները,համատեղ դասավանդման առանձնհատկությունները
- Ներկայացնել համատեղ դասավանդման դասի օրինակներ
- Ներկայացնել համատեղ դասի առավելությունները և թույլ կողմերը:

ԳԼՈՒԽ 1 Թիմային աշխատանքի առանձնահատկությունները

Թիմով աշխատելը քաղաքացիական հասարակություն կերտելու պայմաններից մեկն է: Այդ հմտությունը երեխաները նույնպես պետք է ձեռք բերեն դպրոցում դասավանդման ինտերակտիվ մեթոդներով պարապվող դասերին,: Ուսուցչի հանձնարարությունը կատարելիս նրանք սովորում են «ես ասեմ»-ից անցնել խմբով ճիշտ պատասխանը գտնելուն: Թիմով, խմբով աշխատելիս, պատասխանը գտնելու համար, գլուխ պահող չի կարող լինել, յուրաքանչյուրն իրեն կարևոր է զգում եւ գնահատվում, արժևորվում է:(2) Լավ թիմային աշխատանքը լավ հաղորդակցության, համակարգման, փոխլրացման, վստահության և նվիրվածության հիմքն է: Ահա թիմային աշխատանքի մի քանի առավելություններ, որոնք կարող են կիրառվել կրթական համատեքստերում, որտեղ մի քանի աշակերտ ներգրավված է ընդհանուր նախագծում:

- Թիմային աշխատանքը խթանում է ստեղծագործականությանը և ուսման որակի բարելավմանը:
- Ստեղծագործությունն աճում է, երբ աշակերտները միասին աշխատում են որպես թիմ: Այն թույլ է տալիս ընդլայնել ստեղծագործականությունը ուրիշների տեսակետների շնորհիվ:
- Թիմային աշխատանքը թույլ է տալիս թիմի յուրաքանչյուր աշակերտի լրացնել միմյանց `ստեղծելու վերջնական աշխատանք, որը հնարավոր չէր անհատապես ձեռք բերել:
- Թիմային աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին կենտրոնանալ այն ամենի վրա, ինչ նրանք անում են լավագույնը:
- Հստակ և արդյունավետ հաղորդակցվելու կարողությունը թիմային աշխատանքի հիմնարար հմտություն է: Թիմի հետ աշխատելիս կարևոր է, որ աշակերտը կիսվի մտքերով, գաղափարներով և հիմնական համապատասխան տեղեկություններով: Գոյություն ունեն տարբեր տեսակի հաղորդակցման հմտություններ՝ և՛ բանավոր, և՛ ոչ բանավոր:
- Թիմային աշխատանքի դինամիկայի շրջանակներում կարևոր է, որ ներգրավված կողմերը հասկանան այն աշխատանքը, որի համար իրենք պատասխանատու են և ջանքեր գործադրեն նշված առաջադրանքները ժամանակին և ակնկալվող մակարդակին հասցնելու համար: Ամբողջ թիմը ,սահուն աշխատելով և պատասխանատվություն կրելով սեփական աշխատանքի համար, կարող է միասին աշխատել ընդհանուր նպատակի ուղղությամբ:

- Աշխատանքում ազնվության կիրառումը կարող է լուծել տարաձայնությունները, բացատրել, որ աշակերտը չի կարողացել ժամանակին կատարել որոշակի առաջադրանք կամ կիսվել դժվարություններով: Առանց ազնվության, թիմի համար կարող է դժվար լինել վստահություն ստեղծելը ինչպես նաև արդյունավետ աշխատել միասին:
- Կարևոր է աշխատել այլ գործընկերների հետ՝ մտքեր փոխանակելու, աշխատանքը բարելավելու և միմյանց լավ թիմ կազմելու համար օգնելու համար[2]:

Համատեղ դասավանդման առանձնահատկությունները

Համատեղ դասավանդումն իրենից ներկայացնում է երկու կամ ավել լիազորված մասնագետների համագործակցություն,ովքեր կիսում են հանձնարարված պարտականություններ, աշխատում են մի խումբ սովորողների հետ մեկ ընդհանուր աշխատանքային տարածքում[1]:

Համատեղ դասավանդումը մոդել է, որն ընդգծում է նույն թիմի ներսում բոլոր անդամների միջև համագործակցությունն ու հաղորդակցումը:Այն ուղղված է բոլոր սովորողների կրթական կարիքները լրացնելուն:

Համատեղ դասավանդման մոդելն ունի մի շարք առավելություններ: Դրանք են՝

- մասնագիտական հմտությունների փոխանակումը,
- սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորությունը,
- ընդհանուր կրթության շրջանակներում հատուկ կարիքներով սովորողների համար ավելի մեծ ծրագրային հնարավորությունը:

Վերջինս թույլ կտա նաև բարելավել այդ սովորողների հարաբերություններն իրենց հասակակիցների հետ:

Կան մի քանի ընդհանուր պայմաններ, որոնց ճիշտ կիրառման դեպքում միայն հնարավոր կլինի այս մոդելը արդյունավետ համարել:

Դրանք են՝

- համատեղ դասավանդող մասնագետների նպատակաուղղված համագործակցությունը,
- ադմինիստարատիվ աջակցությունը,
- միանման աշխարհայացքը,

- աշխատանքի կազմակերպման ճիշտ ընտրված ժամանակահատվածը:

Համատեղ դասավանդում համարվում է դասավանդման այն տեսակը, երբ երկու կրթական աշխատողներ աշխատում են միասին՝ տարաբնույթ ընդունակություն ունեցող սովորողների հետ: Առավել հաճախ հանդիպում են հետյալ մասնագետների համատեղ դասավանդող թիմերը՝

- Հատուկ և ընդհանուր կրթություն իրականացնող դասավանդողներ
- հատուկ կամ ընդհանուր կրթվածության դասավանդողներ
- երկու ընդհանուր կրթության դասավանդողներ
- խոսքի/լեզվական խնդիրներ լուծող մասնագետ և հատուկ կամ ընդհանուր կրթության մասնագետ
- սոցաշխատող և հատուկ կամ ընդհանուր կրթության դասավանդող
- այլ աջակցող մասնագետներ կամ կամավորներ և ընդհանուր կամ հատուկ մասնագետ
- ընտրովի առարկաների դասավանդող և ընդհանուր կամ հատուկ մասնագետ

Համատեղ դասավանդման վեց մոտեցում

- Գրականության մեջ հայտնի են Համատեղ դասավանդման հինգ կամ վեց տեսակներ: Սրանք ներմուծվել են գիտություն 1993թ-ին և մինչ այժմ շարունակում են հետազոտվել և նորանոր մշակումներով ներկայացվել ոլորտի մասնագետների կողմից:
- Փոխազդեցություններ. Համագործակցային հմտություններ դպրոցում դասավանդողների համար գրքում Մերիլին Ֆրենդը և Լին Քուկը բնորոշում են համագործակցային դասավանդումը որպես նյութի մատուցման հատուկ ձև, որը հիմնված է համագործակցության վրա: Դրա նպատակը տարաբնույթ կրթական պահանջները կատարելն է: Բոլոր տարիքի և հմտությունների աստիճաններով սովորողները շահում են այլընտրանքային այս ուսուցումից, քանի որ այն հնարավորություն է տալիս մեծացնել դասավանդողի ուշադրությունը փոքր խմբային գործունեություններում:

Վերը նշված գրքում առանձնացվում են Համատեղ դասավանդման վեց մոտեցումներ, որոնք նաև ընդհանրապես դասավանդման այս մոդելի հիմնական տեսակներն են և հանդիպում են բոլոր ուսումնասիրություններում:

1. Դասավանդող մասնագետ + ուսումնասիրող մասնագետ

Համատեղ դասավանդող մասնագետները միասին նախապես որոշում են, թե հետազոտական ինչպիսի նյութի համար են ուսումնասիրություն կատարելու և

համաձայնեցնում են այն համակարգը, որով հավաքագրելու են այդ նյութը: Այնուհետ նրանք քննարկում են դա միասին:

2. Դասավանդող մասնագետ + աջակցող մասնագետ

Այս մոտեցմամբ, երկուսից մեկը վերցնում է դասավանդման հիմնական պարտականությունը, մինչ մյուսը շրջում է լսարանում և ցուցաբերում միայն անհրաժեշտ աջակցություն սովորողներին:

3. Զուգահեռ դասավանդում

Այստեղ երկու մասնագետներն էլ մատուցում են միևնույն նյութը, սակայն բաժանում են սովորողներին երկու խմբի և աշխատում միաժամանակ:

4. ″Կայարանային″ դասավանդում

Այս մոտեցմամբ մասնագետները բաժանում են և սովորողներին, և մատուցվող նյութը: Յուրաքանչյուր դասավանդող մատուցում է նյութը խմբերից մեկին, իսկ հետո կրկնում պահանջը մյուս խմբի համար: Անհրաժեշտության դեպքում առանձնացվում է երրորդ խումբը, որն աշխատում է անկախ:

5. Ալտերնատիվ մոտեցում

Այս դեպքում դասավանդողներից մեկն աշխատում է մեծ խմբի հետ, մինչ մյուսը՝ փոքր խմբի:

6. Թիմային մոտեցում

- Այս դեպում երկու մասնագետներն էլ մատուցում են նյութ միասին և միաժամանակ: Որոշ դասավանդողներ այս մոտեցումն անվանում են մեկ ուղեղ երկու մարմիններում: Շատերն էլ այս մոտեցումը համարում են ամենաբարդը, սակայն առավել արդյունավետ, և այն մեծապես կախված է մասնագետների դասավանդման ոճից[4]:

6 արդյունավետ քայլ համատեղ դասավանդում իրականացնելու համար

1. Կապերի հաստատում, անձնային մակարդակում նմանությունների բացահայտում
2. Ուսուցման, դասարանի կառավարման, դասավանդման ոճերի հստակեցում
3. Ուժեղ և թույլ կողմերի վերհանում քննարկում:

4. Կրթության նպատակի, անհատական ուսուցման պլանի քննարկում, մասնագետների հետ համագործակցում

5. Գործողությունների պլանավորում, թիմային աշխատանք

- Շարունակական միասնական ուսուցում [1]
- **Համատեղ դասավանդման մոդելները**[5]

Նկար 1



ԳԼՈՒԽ 2

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ներկայացնելով համատեղ դասավանդման և թիմային աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները, մոդելները՝ փորձարարական աշխատանքի ընթացքում պլանավորել և իրականացրել ենք կենտրոնների տեղափոխման մոդելով դասավանդում՝ ներկայացնելով այդ մոդելի և համատեղ դասավանդման առավելությունները և թույլ կողմերը:

Ստորև ներկայացնում ենք իրականացված դասերի պլանները:Նշենք,որ համատեղ դասավանդման ընթացքում ուսուցչի օգնականի դերը ստանձնել է այդ ընթացքում դպրոցում մենթորական աջակցություն իրականացնող մենթորը:

Առակների աշխարհում



Դասի պլան

Դասարան՝ IIIᴮ

Առարկան՝ Մայրենի

Թեման՝ <<Առակների աշխարհում>>

Նպատակները՝

1. Ժողովրդական բանահյուսության վերաբերյալ ստացած գիտելիքների ամփոփում:
2. Զարգացնել աշակերտների իրականության հանդեպ փաստերն ու երևույթները ճիշտ ընկալելու և իրենց վերաբերմունքն արտահայտելու կարողություն:
3. Ներկայացնել առակի անուղղակի իմաստի առաջադրումը:
4. Խոսքը օգտագործել որպես մտածողության ակտիվացման միջոց:
5. Ձևավորել աշխարհայացք ճաշակ, առակների միջոցով մշակել վարքի չափանիշներ:

Անհրաժեշտ պարագաներ, ցուցադրական նյութեր՝

1. Առակների վերաբերյալ աշակերտներին ներկայացրած փաթեթները որոնք ստեղծվել են ամբողջ դասարանի կողմից թեմայի ուսուցման ընթացքում:
2. Առակների նկարազարդումներ, համապատասխան առածներ, ասացվածքներ, լրացուցիչ նյութեր:
3. Դասարանում ծնված <<Առակների աշխարհ>>,<<Առակագիրներ>>,<<Առակագիրների ծառ>> խորագրերով պաստառներ:
4. Տեխնոլոգիայի և կերպարվեստի դասաժամերին պատրաստված առակներին վերաբերվող աշխատանքներ:
5. Համակարգչային ցուցադրումներ:

Դասի ընթացքը

Խթանման փուլ.

Թեմայի ամփոփումը կատարվում է մի քանի ուղղություններով,որոնք ընդգրկում են դաստիարակչական, ճանաչողական և լեզվական կողմերը:

<<Մտագրոհ >> մեթոդի կիրառմամբ աշակերտները կվերհիշեն ժողովրդական բանահյուսության տեսակները: Հարց ու պատասխանի ձևով ներկայացնել,թե ինչ է առակը , ինչ է ներկայաացվում առակներում, թվել ծանոթ առակներին և ներկայացնել նրանց ստեղծագործությունները:

Խթանման փուլը ամփոփել <<Պրիզմայի>> մեթոդով:



Իմաստի ընկալում.

Դասարանը բաժանվում է խմբերի: Խմբերի ավագները< <Առակի ծառից >> վերցնում են համապատասխան հանձնարարությունը, տրվում է որոշակի ժամանակ,որպեսզի խմբերում կատարվի քննարկումներ: Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները:

Կշռադատում.

<<Քառաբաժան >>մեթոդով ամփոփել <<Առակների աշխարհում>> դասը:

- ✓ Տեսա
- ✓ Լսեցի
- ✓ Զգացի
- ✓ Եզրակացրի

Գնահատման փուլ.

Խմբային աշխատանքներում մասնակցած ակտիվ աշակերտների գնահատում:

Դասն ավարտվում է երգով՝ նվիրված առակներին:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան՝ 3-րդ

Դասի թեման՝ <<Հայկը և Բելը>>: Գոյականի ձևափոխությունները խոսքում (առանց մատնանշելու հոլովները)

Դասի նպատակը՝ Կարդալու կարողությունների զարգացում՝ պահպանելով կարդալու որակական հատկանիշները:

Ամրակայել երկխոսությունները դերերով կարդալու կարողությունները:

Զարգացնել նկարագրական խոսք կառուցելու կարողությունները՝ բնագրից ընտրելով և կարդալով այն բառերն ու արտահայտությունները, որոնցով հեղինակը նկարագրում կամ բնութագրում է հերոսներին:

Ամրակայել բնագրի հերոսներին համեմատելու և հակադրելու կարողությունը:

Լեզվական կարողություններ՝ Կսովորեն նախադասությունների մեջ տեղադրել գոյականը՝ համապատասխան ձևափոխություններով: Կամրապնդեն հականիշ բառերի մասին ունեցած գիտելիքները:

Ցուցադրական նյութեր՝ <<Հոմանիշներ-հականիշներ>> ցուցապաստառ, քարտային առաջադրանքներ, սահիկահանդես, համակարգիչ, հերոսների նկարներով պաստառ

Դասի ընթացքը՝ Խթանման փուլ՝ կազմակերպչական պահ (այբուբենի արտասանություն և տնային հանձնարարության պարզաբանում): Մտագրոհի մեթոդով աշակերտները կներկայացնեն, թե ովքե՞ր են հերոս համարվում և ովքե՞ր են հայրենիքի մի զարկը:

Արևի շողերին կլրացնեն Հայկ Նահապետ, Սասունցի Դավիթ, Զորավար Անդրանիկ, Մեսրոպ Մաշտոց, Մխիթար Հերացի, Կոմիտաս, Գարեգին Նժդեհ, Վիկտոր Համբարձումյան և այլն:

Իմաստի ընկալման փուլ՝ կկարդան <<Հայկը և Բելը>> բնագիրը նախ միմյանց շարունակելով, ապա՝ ընտրովի և դերերով:

Ընտրովի ընթերցանության համար նախատեսված հարցեր.

1.Ո՞վ էր Հայկը և ինչու՞ հեռացավ բելից:

2.Ո՞վ էր Բելը և ինչու՞ հարձակվեց հայկի երկրի վրա:

3.Կարդալ Հայկին և Բելին բնութագրող տողերը:

4.Կարդալ Հայկի և Բելի կռիվը նկարագրող հատվածը:

Յուրաքանչյուր աշակերտ կստանա նաև լեզվական առաջադրանքներ գոյականի վերաբերյալ.

1.Բնագրից դուրս գրել անձ ցույց տվող 5 գոյական և գործածել նախադասություններում:

2.Բնագրից դուրս գրել հոգնակի թվով գործածված գոյականները և դարձնել եզակի:

3. Հայկ գոյականը տեղադրել նախադասություններում՝ ենթարկելով համապատասխան ձևափոխությունների. ———— քաջ ու կորովաձիգ մի դյուցազն էր:

———— սակավաթիվ զորքը հաղթեց Բելի մեծաքանակ զորքին:

Ես շատ եմ ուզում նմանվել ————:

Այդ օրվանից ———— անունով մեր երկիրը կոչվում է Հայաստան, իսկ մենք՝ հայ:

———— հայերը քաջություն են ժառանգել:

4. Բնագրից դուրս գրել հականիշ բառազույգերը:

5.Նետ բառը համապատասխան ձևափոխություններով տեղադրել նախադասությունների մեջ:

Ֆիզդադար՝ <<Հոմանիշներ-հականիշներ>> պաստառի թեմատիկ նկարում գտնել հականիշ բառազույգեր:

Վարժություն՝ <<Ուռենի-բարդի>>

Տ-աձև աղյուսակով կբնութագրեն Հայկին և Բելին:

Հայկ	Բել

քաջ	հսկա
հսկա	վախկոտ
կորովաձիգ	բռնակալ
հպարտ	գոռոզ
համարձակ	ամբարտավան
անվախ	մեծամիտ
հայրենասեր	դաժան
ազնիվ	ինքնահավան
ուժեղ	

Ստեղծագործական աշխատանք՝ Կհամեմատեն <<Հայկի և Բելի մենամարտը>> <<Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի մենամարտի>> հետ:

Բացատրել <<Շունչը փչել>> դարձվածքի իմաստը՝ գործածելով նախադասությունների մեջ:



Կշռադատման փուլ՝ Անդրադարձ կատարել դասանյութին, ամփոփել հարցերի միջոցով և <<Քառաբաժան>> մեթոդով:

Ի՞նչ տեսա:	Ի՞նչ լսեցի:
Ի՞նչ զգացի:	Ի՞նչ սովորեցի և իմացա:

Գնահատել՝ պատճառաբանելով՝ ըստ կատարած աշխատանքների: Տնային հանձնարարություն՝ արտահայտիչ կարդալ բնագիրը, կատարել առաջադրանք 2, 5:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծելով թեմայի շուրջ համապատասխան գրականություն և իրականացնելով փորձնական դաս՝ եկել ենք հետևյալ եզրակացությունների.

- Թիմային աշխատանքը և համատեղ դասավանդումն ունեն բավական առավելություններ դասն արդյունավետ և ներառող կազմակերպելու համատեքստում
- Մեր պրակտիկայում կիրառելով համատեղ դասավանդման փորձնական տարբերակ՝ կարող ենք նշել դրա առավելությունը.դասերի ընթացքում բոլոր աշակերտերը բառացիորեն ընդգրկված էին դասագործընթացին,ուշադիր էին և ինքնուրույն
- Դասի կազմակերպման՝ կենտրոնների տեղափոխման մոդելն առավել արդյունավետ է փոքրաթիվ աշակերտների հետ, չնայած, երբեմն կարելի է և անհրաժեշտ կազմակերպել նաև մեծաթիվ դասարաններում:

Առաջարկություններ

Հետազոտական աշխատանքի արդյունքում կատարված եզրակացություններից ելնելով առաջարկում եմ՝

- Թիմային աշխատանքը և համատեղ դասավանդումն իրականացնել հաճախակի՝ դասն արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև արդյունավետ ներառման նպատակով
- Համատեղ դասավանդման օգնությամբ .դասերի ընթացքում բոլոր աշակերտերին բառացիորեն ընդգրկկել դասագործընթացին,
- Կենտրոնների տեղափոխման մոդելը կիրառել ինչպես փոքրաթիվ , այնպես էլ մեծաթիվ դասարաններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Դասավանդման ժամանակակից մոտեցումներ», Ձեռնարկ ուսուցչների, ուսուցչի օգնականների եւ մանկավարժահոգեբանական աջակցման ծառայություններ մատուցող մասնագետների համար, Մանուկ Խաչատրյան, Միեր Դավթյան, Երեւան, 2019
2. «Ներառական կրթության ռազմավարություններ դասագիրք» Մինեսոթայի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի Հանրապետություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ,2019
3. «Ուսուցման արդյունավետ հնարներ» / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.
4. https://lalamanoukyan.wordpress.com/2014/06/05/cooperative-teaching/
5. https://www.youtube.com/watch?v=6r-MWaZOELw